ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

<<12>> փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի պահանջներով.
**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Էջմիածին համայնքի 2019թ փետրվարի 12-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Էջմիածին համայնքի ավագանու*
*2019 թվականի փետրվարի 12-ի*
*թիվ 2 արտահերթ նիստի թիվ 12 որոշման*

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 38 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. 25.12.2014Թ-Ի ԹԻՎ 81 <<ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՎ 12.06.2015Թ-Ի ԹԻՎ 37 <<ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՄԱՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի «ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 2019Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 95 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԹԻՎ 6-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

8. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀՈՂԱՄԱՍՆ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊՐԱՆՔԸ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

<<12>> փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով, Էջմիածին համայնքի սանիտարական մաքրման և աղբավայրի մշակման աշխատանքները ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու նախկինում գործածված T-170 մակնիշի բուլդոզեր:

Ելնելով վերոհիշյալից ու հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը:

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Էջմիածին համայնքի 2019թ. բյուջեի ֆոնդային մասում նախատեսված միջոցներից՝ մեկ անձից գնման եղանակով, շուկայական գնով ձեռք բերել T-170 մակնիշի բուլդոզեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

<<12>> փետրվարի 2019թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 38 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը.
**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Էջմիածին համայնքի 2019թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Էջմիածին համայնքի թվով 38 քաղաքացիների հատկացնել 1 550 000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Էջմիածին համայնքի ավագանու 12 փետրվարի 2019թ. արտահերթ թիվ 2 նիստի թիվ 14 որոշմամբ 1 550 000 /Մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ ընդհանուր գումարով Էջմիածին համայնքի թվով 38 քաղաքացիների դրամական օգնություն հատկացնելու մասին

ՑՈՒՑԱԿ

| N | Ազգանուն, Անուն | Հասցե | Անձնագրի N | Գումար |
|---|---|---|---|---|
| 1. | Միսակյան Սրբուհի | Իսահակյան 27 | 005435003 | 40000 |
| 2. | Վարդանյան Էմմա | Արագածի-2գ. 136 բոթեջ | AH0400341 | 50000 |
| 3. | Քալայջյան Ռիմա | Ծերանոց 2 սենյակ | AR0253545 | 15000 |
| 4. | Մկրտչյան Լուսինե | Հոկտեմբեր 93 | AM0582643 | 30000 |
| 5. | Արևշատյան Լիլիա | Պռոշյան 8ա | AH0233296 | 40000 |
| 6. | Մանուկյան Ստեփան | Նարեկացի 12 | AK0487884 | 30000 |
| 7. | Գրիգորյան Անահիտ | Մաշտոց 6/24 | AN0294064 | 20000 |
| 8. | Գաբրիելյան Հասմիկ | Չարենց 7/2 | 008180200 | 25000 |
| 9. | Գևորգովա Աննա | Արագածի-գ. 2/103 | 008591836 | 60000 |
| 10. | Պողոսյան Գոհարիկ | Չարենց 15/13 | AG0510060 | 20000 |
| 11. | Բասոյան Սուսան | Միչուրին 38ա | AN0740876 | 40000 |
| 12. | Գրիգորյան Էմմա | Ջվարթնոց 15/26 | AR0530936 | 40000 |
| 13. | Մելքոնյան Անահիտ | Չարենց 9/65 | AR0588833 | 30000 |
| 14. | Սմբատյան Նելլի | Ա. Մանուկյան 189 | AM0393868 | 60000 |
| 15. | Միքաելյան Մյասնիկ | Մամիկոնյան 33 | AM0519121 | 30000 |
| 16. | Գրիգորյան Լեյլա | Վազգեն Առաջին 43ա/24 | AM0700363 | 60000 |
| 17. | Հարությունյան Մարինե | Մանուշյան 15ա | AS0308214 | 70000 |
| 18. | Այվազյան Արարատ | Ձերժինսկի 30ա | AH0336799 | 25000 |
| 19. | Ջոհարյան Բալասան | Մանուկյան 2 | AM0569736 | 50000 |
| 20. | Սլոբցովա Կամելիյա | Լիդիցե 2/60 | AP0636642 | 40000 |
| 21. | Առուստամյան Օսան | Սուրբ Մ. Խորենացի 1/24 | AM0494613 | 40000 |
| 22. | Գալայճի Գրիգոր | Ծերանոց 4 սենյակ | AP0627325 | 20000 |
| 23. | Բեգլարյան Վարսիկ | Իսակով 5 փակ. 14/1 | AM0701819 | 30000 |
| 24. | Տոնոյան Մելինե | Ա. Խաչատրյան 61 | AR0545999 | 30000 |
| 25. | Ադամյան Աիդա | Այգեստան 14ա | AS0383837 | 50000 |
| 26. | Խաչատրյան Ռուբեն | Վազգեն Առաջին 41բ/6 | 002795060 | 40000 |
| 27. | Ավետիսյան Արմինե | Վազգեն Առաջին 38ա/20 | 008117418 | 80000 |
| 28. | Վարդանյան Թամարա | Մ. Մաշտոց 8/3 | 007358633 | 70000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 29. | Ղավալյան Գայանե | Վազգեն Առաջին 38/36 | 003293560 | 30000 |
| 30. | Հակոբյան Միրուն | Չարենց 7/19 | AN0584391 | 20000 |
| 31. | Ավագյան Լուսինե | Մաշտոց 65/40 | 006882534 | 25000 |
| 32. | Միրզոևա Թերեզա | Խորենացի 1/28 | 008183683 | 50000 |
| 33. | Քոչարյան Վրույր | Վազգեն Առաջին 38/17 | AP0409735 | 80000 |
| 34. | Հովհաննիսյան Բենիկ | Մ. Խորենացի 1/4 | 007014517 | 30000 |
| 35. | Կարապետյան Ռուզաննա | Չարենց 18/47 | 004983151 | 20000 |
| 36. | Իսախանյան Վարդուշ | Արագած 17/5 | 005137500 | 60000 |
| 37. | Գրիգորյան Կարինե | Բաղրամյան 24/26 | 006698294 | 50000 |
| 38. | Բարսումյան Իրա | Չարենց 31ա/14 | AN0667962 | 50000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 1550000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

<<12>> փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

## 25.12.2014Թ-Ի ԹԻՎ 81 <<ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՎ 12.06.2015Թ-Ի ԹԻՎ 37 <<ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՄԱՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 34-րդ կետի, 35-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել 25.12.2014թ-ի թիվ 81 <<Էջմիածին քաղաքային համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների գործնեությունը հաստատելու մասին>> և 12.06.2015թ-ի թիվ 37 <<Էջմիածին քաղաքային համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների գործնեությունը հաստատելու մասին>> որոշումները:
2. Հաստատել Էջմիածին քաղաքային համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանման, ձևավորման և գործունեության նոր կարգը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 2. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 3. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Մկրտչյան Կարեն | | | |
| 4. Կոնդյան Դավիթ | | | | 10. Մովսիսյան Կարեն | | | |
| 5. Հայրապետյան Վարուժան | | | | 11. Մուրադյան Սուրեն | | | |
| 6. Ղազարյան Գևորգ | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
Էջմիածին համայնքի Ավագանու
12 փետրվարի 2019թ.
թիվ 2 արտահերթ նիստի թիվ 15 որոշման

# ԿԱՐԳ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվումեն են համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ ԽՄ-ների) ձևավորման, դրանց գործունեության և այդ մարմիններին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները:

2. Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) միջև:

3. Սույն կարգի խնդիրներն են.

1) հստակեցնել ԽՄ-ների գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.

2) սահմանել ԽՄ-ների քանակն ու անվանումները.

3) սահմանել ԽՄ-ների ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.

4) հստակեցնել ԽՄ-ների գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.

5) սահմանել այլ մարմինների հետ ԽՄ-ների հարաբերությունները.

6) սահմանել ԽՄ-ների գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման մոտեցումները:

## II.ԽՄ-ՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. ԽՄ-ները համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններ են, որոնց միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը: ԽՄ-ները, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող են խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

5. ԽՄ-ների նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԽՄ-ների խնդիրներն են.

1) խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ.

2) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը ՏԻՄ-երին.

3) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:

7. ԽՄ-ների գործառույթներն են.

1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.

2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և գնահատման աշխատանքներին.

3) եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.

4) վերհանել տվյալ ոլորտում հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.

5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.

6) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.

7) ապահովել հարթակ, մի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.

8) աջակցել համայնքում կոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, նպաստել համայնքում առկա հակամարտությունների մեղմմանը.

9) հետևել ԽՄ-ների կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.

10) համագործակցել համայնքային աշխատանքային խմբերի և այլ մարմինների հետ:

## III.ԽՄ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

8. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են թվով 3 /երեք/ ԽՄ-ներ:

Դրանք են.

1) քաղաքաշինության, քաղաքի արտաքին տեսքի, ճարտարապետության հարցերի ԽՄ.

2) երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, հարցերի ԽՄ:

3) կրթական և մշակութային միջոցառումների կազմակերպման հարցերով ԽՄ:

## IV.ԽՄ-ՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

9. ԽՄ-ների ձևավորումը իրականացվում է հետևյալ կարգով.

1) ԽՄ-ները կարողեն ունենալ մինչև 10 անդամ.

2) ԽՄ-ները ձևավորված են համարվում, եթե տվյալ ԽՄ-ի կազմում ընդգրկված է առնվազն հինգ անդամ.

3) ԽՄ-ներն ունեն նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԽՄ-ների անդամ չեն:

10. ԽՄ-ների կազմում, իրենց համաձայնությամբ, կարողեն ներգրավվել.

1) համայնքի ավագանու մեկից երեք անդամ.

2) համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ.

3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.

4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.

5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ.

6) համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչներ.

7) փորձագետներ.

8) համայնքի ակտիվ բնակիչներ.

9) այլ շահագրգիռ անձիք:

11. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:

12. ԽՄ-ները ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում:

13. ԽՄ-ները գործում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո երեք ամսվա ընթացքում ձևավորվում են նոր կազմով ԽՄ-ներ:

15. ԽՄ-ների անդամ չեն կարող լինել.

1) Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.

2) Հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.

3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

16. ԽՄ-ների անդամների թեկնածուների ներկայացումը և հաստատումը կատարվում է հետևյալ կարգով.

1) ԽՄ-ների անդամների թեկնածուներին հաստատում է համայնքի ղեկավարը՝ համապատասխան որոշմամբ.

2) ԽՄ-ների անդամները տվյալ ԽՄ-ի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը.

3) համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նոր կազմով ԽՄ-ներ ձևավորելիս՝ ԽՄ-ների նախկին անդամներն իրենց համաձայնությամբ կարող են նորից ներկայացվել և ընդգրկվել ԽՄ-ների կազմում:

17. ԽՄ-ների անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.

1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).

2) համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).

3) ԽՄ-ների մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է համայնքի ղեկավարը՝ քաղաքացիական հասարակության կամ մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների, պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչների, համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչների, փորձագետների,համայնքի ակտիվ բնակիչներ և այլ շահագրգիռ դիմում ներկայացրած անձանց կազմից ներկայացված տվյալները ուսումնասիրելուց հետո, համապատասխան որոշմամբ :

18. ԽՄ-ների անդամների թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը տեղադրվում են համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքում, ինչպես նաև դրանց առկայության դեպքում՝ կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, թե որ ԽՄ-ներին անդամակցելու համար է կատարվում հրավերը, ովքեր, ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ձևը սահմանված է հավելված 1-ում:

19. ԽՄ-ների անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից անց է կացվում հարցազրույց: Հարցազրույցին կարող են ներկա գտնվել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ:

20. ԽՄ-ների անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.

1) թեկնածուի կրթական ցենզը.

2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.

3) հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.

5) հարցազրույցի արդյունքները:

21. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընդգրկվել ԽՄ-ներից որևիցե մեկի կազմում, գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեգերվում:

22. ԽՄ-ների անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվի:

23. ԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է, համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե ԽՄ-ի անդամը.

1) դիմում է ներկայացրել տվյալ ԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) առկա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և նախրպատիժըկրումէքրեակատարողականհիմնարկում.

4) զորակոչվել է ժամկետային զինծառայության.

5) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.

6) մահացել է:

24. Եթե ԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով տվյալ ԽՄ-ի անդամների թիվը նվազել է հինգից, ապա ԽՄ-ի նոր անդամի թեկնածուն առաջադրվում է դիմում ներկայացրած անձանց ռեգերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:

25. Եթե տվյալ ԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

26. ԽՄ-ի նախագահը համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

27. ԽՄ-ի քարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

## V.ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

28. ԽՄ-ների անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական հիմունքներով:

29. ԽՄ-ների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:

30. Համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) ԽՄ-ների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար, ինչպես նաև ԽՄ-ների գործունեությանը հաշմանդամների, սակավաշարժ խմբերի, կարդալու և լսելու դժվարություններ ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար:

31. ԽՄ-ների նիստերը գումարվում են՝

1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

2) անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

32. Նիստերը հրավիրում և վարում է ԽՄ-ների նախագահը:

33. ԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԽՄ-ի նախագահը:

34. ԽՄ-ի առաջին նիստը գումարվում է տվյալ ԽՄ-ի կազմը հաստատելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:

35. ԽՄ-ների նիստերը կազմակերպվում և անց են կացվում համայնքապետարանի վարչական շենքում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:

36. ԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է համայնքապետարանի վարչական շենքում, տեսանելի վայրում, համայնքի պաշտոնական համացանցային կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):

37. ԽՄ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին:

38. Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում ԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:

39. ԽՄ-ի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:

40. ԽՄ-ների նիստերը դռնբաց են: ԽՄ-ի նիստին կարող են հրավիրվելտվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

41. ԽՄ-ի անդամը ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:

42. ԽՄ-ի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.

1) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը.

2) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է տվյալ ԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարողեն ներկայացնել նաև ԽՄ-ի բոլոր անդամները.

3) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

43. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

44. ԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

45. ԽՄ-ները կազմում և ընդունում են որոշումներ:

46. ԽՄ-ների որոշումներն ընդունվում են ԽՄ-ների եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին:

47. ԽՄ-ի որոշումը համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԽՄ-ների որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

48. ԽՄ-իորոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է տվյալ ԽՄ-ի՝ տարեց անդամի ձայնը:

49. ԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

50. ԽՄ-ի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

51. ԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները:

52. ԽՄ-ի որոշումը ստորագրում են ԽՄ-ի նիստին ներկա անդամները:

53. ԽՄ-ների նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:

54. ԽՄ-ների նիստերն արձանագրվում են ԽՄ-ների քարտուղարի կողմից:

55. Նիստի արձանագրությունը ներառում է.

1) նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.
2) նիստին մասնակցած ԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.
3) նիստի օրակարգը.
4) քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.
5) ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.
6) ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները (եթե այդպիսիք կան):

56. Նիստի արձանագրությանը կցվում են տվյալ ԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

57. ԽՄ-ների նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ների քարտուղարը:

## VI.ԽՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

58. ԽՄ-ները մշտական կապ են հաստատում և համագործակցում են համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:

59. ԽՄ-ները ուղղակի կապեն հաստատում համայնքային աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ՀԱԽ-եր) հետ, որոնք կարող են ձևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բնագավառների (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի: ԽՄ-ների անդամները կարողեն նախաձեռնել նման ՀԱԽ-երի ձևավորումը: ՀԱԽ-երի ձևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասին տեղեկացնել այն ԽՄ-ին, որի գործունեության ոլորտին առնչվում են տվյալ ՀԱԽ-ի ձևավորման նպատակները: ՀԱԽ-ի անդամների կազմը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և համապատասխան ԽՄ-ի հետ: ՀԱԽ-երն իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի, ներկայացնում են նաև այն ԽՄ-ին, որին առնչվում են այդ արդյունքները: ԽՄ-ները մեթոդական օգնություն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն են տրամադրում ՀԱԽ-երին՝ նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

## VII.ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

60. Համայնքում գործող ԽՄ-ների գործունեությունը դադարեցվում է.

1) երբ լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը.

2) երբ սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են ԽՄ-ների քանակները և (կամ) անվանումները:

## VIII.ԽՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

61. ԽՄ-ների գործունեությանն առնչվող՝ համայնքի ավագանու գործառույթներն են.

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
3) կարող է համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԽՄ-ների ուսումնասիրությունների, եզրակացությունների և առաջարկությունների հետ.
4) կարող է համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԽՄ-ների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ.
5) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԽՄ-ների գործունեության վերաբերյալ:
62. ԽՄ-ներ գործունեությանն առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.
1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
2) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
3) հաստատում է ԽՄ-ների կազմը, համապատասխան որոշմամբ.
4) համապատասխան որոշմամբ դադարեցնում է ԽՄ-ների անդամների գործունեությունը.
5) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԽՄ-ների գործունեությունը.
6) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԽՄ-ների՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
7) հրավիրում և վարում է ԽՄ-ների նիստերը.
8) որոշում է ԽՄ-ների նիստերին հրավիրվող անձանց ցկազմը.
9) ձևավորում է ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերը.
10) ծանոթանում է ԽՄ-ների ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
11) ԽՄ-ների եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
12) նախաձեռնում է ՀԱԽ-երի ձևավորումը.
13) համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ձևավորվող ՀԱԽ-երի կազմի վերաբերյալ:
63. Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ՝ համայնքի ղեկավարին, որպես ԽՄ-ի նախագահի՝ փոխարինում է համայնքի ղեկավարի տեղակալը:
64. ԽՄ-ների գործունեությանն առնչվող՝ համայնքի աշխատակազմի քարտուղարի գործառույթներնեն.
1) կազմակերպում է ԽՄ-ների գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է ԽՄ-ների գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
2) իրականացնում է ԽՄ-ի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԽՄ-ի քարտուղարին:
65. ԽՄ-ի քարտուղարի գործառույթներն են.
1) հարցեր է ընդունում ԽՄ-ների անդամներից ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
2) ապահովում է ԽՄ-ների կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
3) ապահովում է ԽՄ-ների անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.
4) վարում է ԽՄ-ների գործավարությունը.
5) կազմում և ստորագրում է ԽՄ-ների նիստերի արձանագրությունները.
6) ապահովում է ԽՄ-ների գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:
66. ԽՄ-ների անդամների գործառույթներն են.
1) մասնակցում են ԽՄ-ների նիստերին.
2) հարցեր են ներկայացնում ԽՄ-ների նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԽՄ-ների նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.

4) մասնակցում են ԽՄ-ների որոշումների ընդունման քվեարկությանը.

5) ստորագրում են ԽՄ-ների որոշումները.

6) ծանոթանում են ԽՄ-ների նիստերի արձանագրություններին.

7) կատարում են ԽՄ-ների որոշումներից բխող կամ ԽՄ-ների նախագահի կողմից տրված հանձնարարականներ.

8) նախաձեռնում են ՀԱԽ-երի ձևավորումը:

## IX.ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

67. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:

Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է
Էջմիածին համայնքի Ավագանու
12 փետրվարի 2019թ.
թիվ 2 արտահերթ նիստի թիվ 15 որոշման

# ԴԻՄՈՒՄ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ

**Անձնական տվյալներ**

_______________________________________________

անուն ազգանուն հայրանուն

_______________________________

ծննդյան օր, ամիս, տարի

**Ով է առաջադրել Ձեր թեկնածությունը**

Ինքնառաջադրում ☐ _______________________________________

Ձեր թեկնածությունն առաջադրող կազմակերպության կամ խմբիկանվանումը

| Սեռ | Հասցե | |
|---|---|---|
| ☐ արական ☐ իգական | փաստացի բնակության | հաշվառման |

**Հեռախոս**

աշխ: ______________ տուն: ______________ Բջջ: ______________

**Էլեկտրոնային հասցե**

_______________________________________________

**Դուք համայնքի բնակի՞չ եք**

☐ այո ☐ ոչ որքան ժամանակ ______________

| Կրթություն | Ազգություն |
|---|---|
| ☐ բարձրագույն☐ միջնակարգ☐ այլ | ______________ |

**Մասնագիտություն**

1.______________________________ 2.______________________________

**Դուք հանդիսանում եք**

☐ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ խմբերի ներկայացուցիչ
☐ մասնավոր հատվածի կազմակերպությունների կամ խմբերի ներկայացուցիչ
☐ պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչ
☐ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների և (կամ) համայնքի ________ բնակավայրի և (կամ) ____________ թաղամասի ներկայացուցիչ
☐ փորձագետ
☐ ակտիվ բնակիչ
☐ այլ շահագրգիռ անձ

**Նշեք Ձեր ընթացիկ աշխատանքը/զբաղեցրած պաշտոնը**

______________________________________________

______________________________________________

**Նշեք, թե ինչ հասարակական գործունեությամբ եք զբաղվում (օրինակ, որևէ հասարակական կազմակերպության կամ նրա խորհրդի անդամ եք)**

______________________________________________

______________________________________________

**Արդյո՞ք նախկինում եղել եք համայնքի ավագանու, աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպության ներկայացուցիչ, հասարակական կարգով գործող որևէ մարմնի անդամ**

| | |
|---|---|
| ☐ այո ☐ ոչ | Նկարագրություն<br>______________<br>______________ |

**Անդամակցե՞լ եք արդյոք նախկինում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող որևէ խորհրդակցական մարմնի**

| | | |
|---|---|---|
| ☐ այո ☐ ոչ | որքան ժամանակ<br>______________<br>______________ | խորհրդակցական մարմնի անվանումը ______________<br>______________ |

**Տեղեկացվա՞ծ եք արդյոք համայնքի ղեկավարին կից ձևավորվող խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգին և ի վիճակի՞ եք արդյոք մասնակցել այդ մարմնի աշխատանքներին**

| տեղեկացված եք | կարող եք մասնակցել |
|---|---|
| ☐ այո ☐ ոչ | ☐ այո ☐ ոչ |

**Ինչու՞ եք հետաքրքրված խորհրդակցական մարմնին անդամակցելու**

______________________________________________

______________________________________________

**Այլ տեղեկատվություն կամ հաղորդագրություն, որ կցանկանայիք ուղղել համայնքի ղեկավարին**

______________________________________________

______________________________________________

Դիմող՝ ....................................................................
(Անուն, ազգանուն, հայրանուն)

«______» «______________» «20______թ. »

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

**ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի «ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով այն փաստը, որ Էջմիածին քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ, հոգեբան՝ Ռուզաննա Մկրտչյանը իր դիմումի համաձայն խնդրել է հանել իրեն հանձնաժողովի անդամների կազմից և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Էջմիածին համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի «Էջմիածին քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 26 որոշման մեջ կատարել փոփոխություն.

Որոշման առաջին կետի, անդամներ մասում «Ռուզաննա Մկրտչյան /հատուկ հոգեբան/» բառերը փոփոխել «Մարիա Սաարյան / հոգեբան, սոց. մանկավարժ/» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | | 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | | 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | | 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | | 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | | 11. | Մուրադյան Սուրեն | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ինքնակենսագրություն

Ես՝ Սարգիս Հայկի Սարգսյանս, ծնվել եմ 25-ը փետրվարի, 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում:

1997-2008թթ. սովորել եմ [illegible] Կրթության Հայաստանի Հանրապետության [illegible] մարզի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

2015 թվականին ընդունվել եմ [illegible] [illegible] [illegible] համալսարանի՝ Կրթության, [illegible] և [illegible] ([illegible]) բաժնի՝ [illegible] մասնագիտության բաժին:

Մասնագիտությամբ՝ 2017թ. սեպտեմբերի 1-ից ընդունվել եմ աշխատանքի՝ [illegible] [illegible] [illegible] միջնակարգ դպրոցում ԴՊՀԿ-ում որպես [illegible] [illegible] և [illegible]: Ներկա պահին աշխատում եմ նույն դպրոցում:

Ամուսնացած եմ, ունեմ երկու որդի:

Ինքնակենսագիր՝ [signature] Ս. Սարգսյան

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի «ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 2019Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 95 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԹԻՎ 6-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածնի համայնքապետարանի <<Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան>> ՀՈԱԿ-ի տնօրեն Հ.Մելքոնյանի զեկուցագրերը ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Էջմիածին համայնքի Ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Էջմիածին քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 4-ի «Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2019թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 95

1) որոշմամբ հաստատված հավելված 6-ի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

- Աշխատակիցների քանակը տողի <<29>> թվի փոխարեն կարդալ <<28>>թիվը
- 3-րդ տեղամաս բառերից հետո << /թիվ 15 մանկապարտեզի շենք/>> բառերը կարդալ <</թիվ 16 մանկապարտեզի շենք/>> բառերը
- 3-րդ տեղամասի հաստիքների մեջ ավելացնել գրադարանավարի ևս 2 հաստիք և կարդալ հետևյալ կերպ՝ գրադարանավար հաստիք, 3 միավոր, 72752 դրույքաչափ, 218256 աշխատավարձի ֆոնդ , ընդամենը 219008.
- 7-րդ տեղամաս /թիվ 16 մանկապարտեզի շենք/ բառերը, հաստիքներով /վարիչ, գրադարանավար/, միավորներով /1 և 2/, դրույքաչափերով /72752և 72752/և աշխատավարձի ֆոնդով /72752, 145504 և 218 256/ բառերը հանել:
- ընդամենը տողը փոփոխել ՝<<28,5>> միավորի փոխարեն կարդալ ՝<<27,5>>, իսկ <<2 196 804>> թվերի փոխարեն կարդալ <<2 124 052>> թվերը.:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Տովմասյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ

1101 ք. Էջմիածին, Մովսես Խորենացի 2, հեռ. +374 (231) 40145, 53918, ֆաքս +374 (231) 45663
1101 Ejmiatsin, 2 Movses Khorenatsi, TEL. +374(231) 40145, 53918, 55361, FAX. +374 (231) 45663

N: 3

« 05 » փետրվար 2019 թ.

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ՝ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

## Զեկուցագիր

*Հարգելի տիկին Գասպարյան,*

*Առաջարկում ենք Ձեզ քննարկել Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը փոփոխության ենթարկելու հարցը՝ ենթակայության տակ գտնվող երկու տեղամասերի՝ Թոթովենցի անվան թիվ 3 տեղամասի /15-րդ մանկապարտեզի շենք/ և թիվ 7 տեղամասի /16-րդ մանկապարտեզի շենք/ միաձուլման անհրաժեշտության խնդրով պայմանավորված:*

*Քանի որ երկու գրադարաններն էլ գտնվում են Զվարթնոց թաղամասում, անմիջապես դեմ դիմաց /թիվ 12 հիմնական դպրոցի աջ և ձախ կողմում/, և երկուսն էլ ունեն շենքային ոչ բավարար պայմաններ, առավել նպատակահարմար ենք գտնում, գրադարանների միաձուլումը՝ տեղամասերից մեկի վարիչի հաստիքի կրճատմամբ, ինչը հնարավորություն կընձեռի մեզ ավելի նպատակաուղղված օգտագործել ֆինանսական միջոցները՝ շենքային պայմանները բարելավելու, ֆոնդերի ստուգման, համալրման, մշակման, քարտագրման, թվայնացման և էլեկտրոնային շտեմարանների պատրաստման աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպելու և համապատասխանաբար ընթերցողների սպասարկումն ավելի դյուրին և որակյալ իրականացնելու համար: Առաջարկում ենք Թոթովենցի անվան թիվ 3 տեղամասի /15-րդ մանկապարտեզի շենք/ գույքն ու ֆոնդերը տեղափոխել թիվ 7 տեղամաս՝/16-րդ մանկապարտեզի շենք/՝ պահպանելով թիվ 3 տեղամասի գործառույթները:*

ՏՆՕՐԵՆ Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 6
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 4 դեկտեմբերի 2018թ.
թիվ 14 արտահերթ նիստի թիվ 95 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի
Ավագանու 12 փետրվարի 2019թ.
արտահերթ թիվ 2 նիստի թիվ 17 որոշմամբ

2019թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածնի համայնքապետարանի <<Հ.Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների քանակը 28

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան ՀՈԱԿ | | | | |
|---|---|---|---|---|
| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
| 1 | Տնօրեն | 1 | 184000 | 184000 |
| 2 | Գլխավոր հաշվապահ | 0.5 | 97000 | 48500 |
| | Ընդամենը | 1.5 | | 232,500 |
| Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան 1-ին տեղամաս | | | | |
| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Մատենագետ | 1 | 72752 | 72752 |
| 3 | Գրադարանավար | 5 | 72752 | 363760 |
| 4 | Հավաքարար | 1 | 72752 | 72752 |
| | Ընդամենը | 8 | | 582,016 |
| Վաչագան Հովհաննիսյանի անվան գրադարան 2-րդ տեղամաս /թիվ 14 մանկապարտեզի շենք/ | | | | |
| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Մանկական բաժնի վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 3 | Գրադարանավար | 5 | 72752 | 363760 |
| | Ընդամենը | 7 | | 509,264 |
| Վահան Թոթովենցի անվան գրադարան 3-րդ տեղամաս /թիվ 16 մանկապարտեզի շենք/ | | | | |
| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Գրադարանավար | 3 | 72752 | 218256 |
| | Ընդամենը | 4 | | 291,008 |
| 4-րդ տեղամաս /թիվ 5 մանկապարտեզի շենք/ | | | | |
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Գրադարանավար | 1 | 72752 | 72752 |
| | Ընդամենը | 2 | | 145,504 |
| Արարատ Ալվազյանի անվան գրադարան 5-րդ տեղամաս /Կոմիտասի 0/ | | | | |

| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Գրադարանավար | 1 | 72752 | 72752 |
| Ընդամենը | | 2 | | 145,504 |
| Մնացական Թարյանի անվան գրադարան 6-րդ տեղամաս /թիվ 13 մանկապարտեզի շենք/ | | | | |
| հ/հ | Հաստիքը | միավոր | դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
| 1 | Վարիչ | 1 | 72752 | 72752 |
| 2 | Գրադարանավար | 2 | 72752 | 145504 |
| Ընդամենը | | 3 | | 218,256 |
| Ընդամենը | | 27.5 | | 2,124,052 |

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

# ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Էջմիածին համայնքի Ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Էջմիածնի համայնքապետարանի թիվ 13 <<Ծիծեռնակ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակել՝ Աննա Յուրիկի Սողոմոնյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 2. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 3. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Մկրտչյան Կարեն | | | |
| 4. Կոնդյան Դավիթ | | | | 10. Մովսիսյան Կարեն | | | |
| 5. Հայրապետյան Վարուժան | | | | 11. Մուրադյան Սուրեն | | | |
| 6. Ղազարյան Գևորգ | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ցածրաշենի համայնքի ղեկավար
պարոն Վ. Ջաղաբարյանին
նույն գյուղի Անդրանիկի 2րդ
54/1 տուն բնակիչ
Հենա Սարգսյանից

Դիմում

Խնդրում եմ գրանցել իմ բնակատեղս
Ցածրաշենի թիվ 13 «ՕՐՏՏՄԱՆՅԱՆ» մանկապար-
տեզ ՀՌԱՇ-ի գրանցման պայմանով:

Դիմող [signature] Ռ. Սարգսյան

5.02.2019թ.

299
05 փետրվարի 2019թ.

# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Աննա Յուրիկի Սողոմոնյանս, ծնվել եմ 13.08.1970 թվականին Արարատի մարզի Վերին Արտաշատ գյուղում:

1977-1987 թթ. սովորել և բարձր առաջադիմությամբ ավարտել եմ Վերին Արտաշատի միջնակարգ դպրոցը:

1987 թ. ավարտելով դպրոցը՝ ընդունվել եմ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

1992 թ. ավարտել եմ ինստիտուտը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ որակավորմամբ:

1992 թ. ընդունվել եմ Էջմիածնի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1995-1999թթ. համատեղության կարգով աշխատանքի եմ ընդունվել Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջ՝ դասավանդել « Մանկավարժություն» և «Խոսքի մշակույթ» առարկաները:

1994 թ.-ից ղեկավարել եմ դպրոցի ուսմունքի խմբակը,ունեցել եմ քաղաքային,մարզային և հանրապետական փուլերում հաղթող աշակերտներ, որի համար արժանացել եմ խրախուսանքի և ՀՀ նախագահի մոտ հանդիպման:

1999-2001 թթ. դպրոցում զբաղեցրել եմ ուսմասվարի պաշտոն:

2011 թ. ստացել եմ պատվոգիր դպրոցից:

2013 թ.-ին մասնակցել եմ « Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հանրակրթական ուսումնական հաստատության ատեստավորման ենթակա ուսուցիչների համար իրականացված վերապատրաստման դասընթացին և ստացել վկայական:

2018 թ.-ի փետրվարին Էջմիածնի քաղաքապետի կողմից մայրենիի օրվա կապակցությամբ արժանացել եմ Շնորհակալագրի և դրամական պարգևի:

2018թ. ապրիլին դարձյալ մասնակցել եմ « Կրթության ազգային ինստիտուտ » ՓԲԸ-ի կողմից վերապատրաստման և ատեստավորման 7 շաբաթյա դասընթացին և ստացել վկայական:

Ամուսնացած եմ ,ունեմ 2 տղա:

05.02.2019 թ. — (ստորագրություն) — Ա.Յ.Սողոմոնյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 71–րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի N 286 որոշման VI բաժնի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետերով և հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի Արագածի զանգ. թիվ 1/1 շենքի, թիվ 11 բնակարանի բնակիչ Ռուդիկ Գարեգինի Հովհաննիսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող ք.Էջմիածին, Արագածի զանգված 16/104 հասցեում գտնվող 96քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Տերյան փողոց 934/1 հասցեում գտնվող 96քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Էջմիածին քաղաքի Արագածի զանգ. թիվ 1/1 շենքի, թիվ 11բնակարանի բնակիչ Ռուդիկ Գարեգինի Հովհաննիսյանի սեփականությունը հանդիսացող, ներկայումս համայնքի սեփականությունը համարվող այգու մեջ գտնվող ք.Էջմիածին, Արագածի զանգված 16/104 հասցեում գտնվող 96քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը /սեփականության վկայական 16102018-04-0045, կադաստր. ծածկագ. 04-002-0819-0029/ փոխանակելու Էջմիածնի համայնքային սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Տերյան փողոց 934/1 հասցեում գտնվող 96քմ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի հետ, հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2. Ռուդիկ Գարեգինի Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասերի փոխանակության մասին պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 2. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 3. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Մկրտչյան Կարեն | | | |
| 4. Կոնդյան Դավիթ | | | | 10. Մովսիսյան Կարեն | | | |
| 5. Հայրապետյան Վարուժան | | | | 11. Մուրադյան Սուրեն | | | |
| 6. Ղազարյան Գևորգ | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Էջմիածնի քաղաքապետ
պրն.՝ Կ. Գրիգորյանին
Մաշտոցի 2/1 շենքի 11 բնակարանի
բնակիչ՝ Ռուզան Հովհաննիսյանից

# Դիմում

[illegible] [illegible] №16/1109 [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] 5 ՆՅ (վկ. №16102018-04-0045)։ [illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible] 5, [illegible] եմ [illegible] [illegible] [illegible] [illegible] 5 [illegible] [illegible]։

Դիմող՝ [illegible]

Ռ. Հովհաննիսյան
հեռ. 093-78-07-20
041-77-77-87

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես Ռուդիկ Գարեգինի Հովհաննիսյանս հասցե՝ ք.Էջմիածին Արագածի զանգ. թիվ 1/1 շենքի, թիվ 11բն., անձ AN0756710, տրված 23.12.2013թ-ին, 057-ից, դիմել եմ Էջմիածնի համայնքապետարան ինձ սեփականության իրավունքով պատկանող ներկայումս համայնքի սեփականությունը հանդիսացող այգու մեջ գտնվող ք.Էջմիածին, Արագածի զանգված 16/104 հասցեով 96քմ մակերեսով հողամասը /սեփականության վկայական 16102018-04-0045, կադաստր.ծածկագ. 04-002-0819-0029, / փոխանակելու խնդրանքով:

Համայնքապետարանը առաջարկել է վերը նշված հողամասը փոխանակել Էջմիածին քաղաքի Տերյան փողոցում գտնվող 96քմ մակերեսով հողամասի հետ, որի համար հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 24.11.2003թ. թիվ 1746-Ն որոշումը պետք է վճարել կադաստրային արժեքի տարբերությունը, որը կազմում է 233 856 /երկու հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր հիսունվեց /ՀՀ դրամ:

Տալիս եմ իմ համաձայնությունը կատարել հողամասի փոխանակում:

Պարտավորվում եմ մուծել վերը նշված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը, հողամասի սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը, ինչպե նաև փոխարենը հանձնել ք.Էջմիածին, Արագածի զանգված 16/104 հասցեում գտնվող 96քմ մակերեսով հողամասը:

Ռուդիկ Հովհաննիսյան Գարեգինի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «29» Հունվարի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ԷՋՄԻԱԾԻՆ) ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ ք. Վ. Տերյան փողոց 934/1 հողամաս

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշում, Էջմիածին համայնքի ղեկավարի 21.01.2019թ. թիվ 20 որոշում

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը` 04-002-0026-0062

Մակերեսի չափը (հա)` 0.0096

Նպատակային նշանակությունը` բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը` ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Յուրի Մարտիրոսյան

զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «16» Հոկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՌՈՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՐԵԳԻՆԻ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍՑԵՆ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ ք. Արագածի զանգված 16/104 հողամաս

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Էջմիածնի քաղաքապետի 21.04.2005թ. թիվ 768 որոշում: Վարձակալության 22.08.2005թ. Մ/Ս 3632 պայմանագիր:

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0819-0029

Մակերեսի չափը (հա)՝ 0.0096

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 16102018-04-0045, գաղտնաբառ՝ FHZIZC3ZEFSG

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է << 04.10. 2005թ. հ. 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն. պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում

[illegible] պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Խոսրով Իսրայելյան

[illegible] մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

[illegible]6102018-04-0045, գաղտնաբառ՝ FHZIZC3ZEFSC

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով և 22-րդ կետով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Էջմիածին համայնքի Ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2657816/ Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաք, Պետ. Տնկարան 6/3 հասցեում գտնվող 0,148 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-0015-0010/ բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը, հասարակական շինություն կառուցելու նպատակով:

2. Հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 100% չափով:

3. Հողամասի աճուրդի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:

4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի <<Աճուրդային հանձնաժողով>> -ի միջոցով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գրիգորյան Վարդան | | | |
| 2. Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. Կոնդյան Դավիթ | | | |
| 5. Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. Ղազարյան Գևորգ | | | |
| 7. Մելիքյան Ներսես | | | |
| 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 9. Մկրտչյան Կարեն | | | |
| 10. Մովսիսյան Կարեն | | | |
| 11. Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով 01.06.2010թ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Էջմիածին համայնքի Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաք, Ա.Մանուկյան փող. թիվ 2-րդ թաղ. թիվ 99/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 04-002-0914-0029/ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված, որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր չունեցող՝ 0,0395 հա մակերեսով հողամասը ճանաչել Էջմիածին քաղաքային համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Սուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**11/02/2019թ. N Կ-06/02/2019-6-0050**

*Հայցեատեր՝*

**Լ/Ա Ոստանիկ Մարտիրոսյան**

*Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը*

**Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք.**

*Ձեր **N 06/02/2019-6-0050** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝*

**դիմումով պետական գրանցման ներկայացված հողամասը փոխանցված չէ համայնքին որպես սեփականություն /հանդիսանում քաղաքացիների սեփականություն/, ուստի անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱԳԿ ՊԿ նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով սահմանված՝ նշված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը: Նշված կոորդինատներով հողամասը կադաստրային քարտեզում տեղադրելիս առաջանում է անհրաժեշտություն քարտեզում կատարել փոփոխութուն, անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010 թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի պահանջներով նախատեսված համայնքի ղեկավարի գրություն քարտեզում համապատասխան ուղղում կատարելու համար:**

*Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի **Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր Արա Նազարյան*** *

*Սույն որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով` այն ընդունած պաշտոնատար անձի կողմից:

Որոշումը հանձնող Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ Կ.Տ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով և 22-րդ կետով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Էջմիածին համայնքի Ավագանին**

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաք, Ա.Մանուկյան փող. թիվ 2-րդ թաղ. թիվ 99/1 հասցեում գտնվող 0,0395 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-0914-0029/ բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը, բնակելի շինություն կառուցելու նպատակով:

2. Հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 100% չափով:

3. Հողամասի աճուրդի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:

4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի <<Աճուրդային հանձնաժողով>> -ի միջոցով:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գրիգորյան Վարդան | | | | 7. Մելիքյան Ներսես | | | |
| 2. Զաքարյան Սերգեյ | | | | 8. Միրզոյան Արամայիս | | | |
| 3. Խաչատրյան Թովմաս | | | | 9. Մկրտչյան Կարեն | | | |
| 4. Կոնոյան Դավիթ | | | | 10. Մովսիսյան Կարեն | | | |
| 5. Հայրապետյան Վարուժան | | | | 11. Մուրադյան Սուրեն | | | |
| 6. Ղազարյան Գևորգ | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊՐԱՆՔԸ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Ալբերտ Զարբաբյան Անդրանիկի>> ԱՁ-ի դիմումը և Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը
**Էջմիածին համայնքի Ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. <<Ալբերտ Զարբաբյան Անդրանիկի>> ԱՁ -ին սեփականության իրավունքով վաճառքի միջոցով օտարել ապրանք՝ կենցաղային և շինարարական աղբից ԱՁ-ի կողմից տարանջատված թափոններ:
2. Ապրանքի ամսական վարձավճարի չափը սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, պայմանագիրը կնքելով 6 /վեց/ ամիս ժամկետով:
3. Էջմիածին համայնքի ղեկավարին առաջարկել մեկամսյա ժամկետում <<Ալբերտ Զարբաբյան Անդրանիկի>> ԱՁ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | [signature] | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | [signature] | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | [signature] | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | [signature] | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | [signature] | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | [signature] | | |
| 7. | Մելիքյան Ներսես | [signature] | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | [signature] | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | [signature] | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | [signature] | | |
| 11. | Սուքիասյան Սուրեն | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Աստղիկ Գուրգենի Մանուկյան>> ԱՁ-ի դիմումը և Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը
**Էջմիածին համայնքի Ավագանին**

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. <<Աստղիկ Գուրգենի Մանուկյան>> ԱՁ ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 11,7 /II.4/21 համարակալումով/ մակերեսով ոչ բնակելի տարածքը, որը գտնվում է Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի 0 հասցեում՝ Էջմիածնի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում, կադաստրային չափագրման գործնեություն ծավալելու նպատակով, որպես գրասենյակ օգտագործելու համար, մինչև 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Տարածքի ամսական վարձավճարի չափը՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար, սահմանել 500 /հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Էջմիածին համայնքի ղեկավարին առաջարկել մեկամսյա ժամկետում <<Աստղիկ Գուրգենի Մանուկյան>> ԱՁ հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | |
| 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 11. | Մուրադյան Մուրեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ Էջմիածին քաղաքի

քաղաքապետ տիկին՝ Դ.Գասպարյանին

ԱՁ << Աստղիկ Գուրգենի Մանուկյան >>-ից

# ԴԻՄՈՒՄ

Հարգելի տիկին՝ Դ. Գասպարյան

Կադաստրային չափագրման գործունեություն ծավալելու նպատակով, խնդրում եմ Ձեզ, վարձակալության իրավունքով ինձ տրամադրել Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Էջմիածին փ. Մ.Մաշտոց N-0 հասցեում գտնվող 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտնվող II.4/21 համարակալումով 11.7քմ-ով նշագրված տարածքը:

Կից ներկայացնում եմ՝

1. Վերոնշյալ տարածքը նշագրված հատակագիծ՝
2. << Աստղիկ Գուրգենի Մանուկյան >> ԱՁ պետական միասնական գրանցամատյանից քաղվածք,
3. Քարտեզագրողի, Գեոդեզիստի, Չափագրողի, ( Հաշվառողի), Հողաշինարարի Որակավորում,
4. Անձնագիր:

Դիմող՝ Ա.Մանուկյան

Հավելվ
Հայաստանի Հանրապետության կառավարությա
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետակա
կոմիտեի նախագահի«20»10.2011թ.N 284-Ն հրամանի

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջմիածին համայնք
Անուն, ազգանուն (անվանում)

| Արմավիր | Էջմիածին | Մ.Մաշտոց 0 |
|---|---|---|
| Մարզ | Համայնք | Հասցե |

Մասշտաբ 1:200



# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Իմպրովիզ>> ՍՊԸ-ի համահիմնադիր և գործադիր տնօրեն՝ Հովհաննես Սարգսյանի դիմումը և Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը
**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. <<Իմպրովիզ>> ՍՊԸ-ի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 35,7 /II.4/02 համարակալումով/ մակերեսով ոչ բնակելի տարածքը, որը գտնվում է Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի 0 հասցեում՝ Էջմիածնի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում, SS ոլորտի զարգացման և համակարգչային դասընթացների անցկացման նպատակով, որպես գրասենյակ օգտագործելու համար, մինչև 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Տարածքի ամսական վարձավճարի չափը՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար, սահմանել 500 /հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Էջմիածին համայնքի ղեկավարին առաջարկել մեկամսյա ժամկետում <<Իմպրովիզ>> ՍՊԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | [signature] | | | 7. | Մելիքյան Ներսես | [signature] | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | [signature] | | | 8. | Միրզոյան Արամայիս | [signature] | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | [signature] | | | 9. | Մկրտչյան Կարեն | [signature] | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | [signature] | | | 10. | Մովսիսյան Կարեն | [signature] | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | [signature] | | | 11. | Մուրադյան Սուրեն | [signature] | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | [signature] | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Իմպրովիզ ՍՊԸ
Improvis LLC

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կամարակի 69/1, ք. Գյումրի, Գայի 1, հեռ. +37493 60 22 10 էլ. փոստ: info@improvismail.com
Address: RA, Yerevan, Kamarak 69/1, Gyumri, 1 Gayi Street, Mob: +37493 60 22 10 e-mail: info@improvismail.com

ՀՀ Արմավիրի մարզի էջմիածին քաղաք
քաղաքապետ՝ տկն. Գասպարյանին
<<Իմպրովիզ>>ՍՊԸ համահիմնադիր և
գործադիր տնօրեն ՝ Ֆ.Մ.Գ.Թ.
Հովհաննես Սարգսյանից

Հարգելի տկն. Գասպարյան,

Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու նպատակով խնդրում ենք Ձեւ վարձակալության հիմունքով <<Իմպրովիզ>> ՍՊԸ -ին տրամադրել էջմիածին համայնքի սեփականությու հանդիսացող՝ ք. Էջմիածին փ. Մ. Մաշտոց N-0 հասցեում գտնվող 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկի II.4/0 համարակալում ունեցող տարածքը: Որպես հեռահար նպատակ՝ Էջմիածին քաղաքում ստեղծե <<Իմպրովիզ>> ՍՊԸ-ի մասնաճյուղ, աջակցել քաղաքի և մարզի ՏՏ ոլորտի զարգացմանը: Մե անհրաժեշտ է տեղում պատրաստել որակյալ կադրեր, որին և միտված է ուսումնական կենտրոնի բացումը Արդեն իսկ ունենալով նմանատիպ փորձ Գյումրիում և Եղվարդում՝ ունենք մարզերում ՏՏ-ի զարգացմա համար անհրաժեշտ ամբողջական հայեցակարգ, և պատրաստ ենք այն ներկայացնել հնարավո հանդիպման դեպքում:

Կից ներկայացնում եմ՝

1. <<Իմպրովիզ>> ՍՊԸ Պետ. Ռեգիստրի վկայականի պատճեն
2. Անձնագրի պատճեն
3. Վերոնշյալ տարածքի նշագրված հատակագիծը

<<Իմպրովիզ>> ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝

Հովհաննես Սարգսյա

01/23/201

24 հունվարի 2019թ. 196

Հավ
Հայաստանի Հանրապետության կառավա
առընթեր անշարժ գույքի կադաստրի ս
կոմիտեի նախագահի«20»10.2011թ.N 284-Ն

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջմիածին համայնք
Անուն, ազգանուն (անվանում)

Արմավիր
Մարզ

Էջմիածին
Համայնք

Մ.Մաշտոց 0
Հասցե

Մասշտաբ



# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

«12» փետրվարի 2019թ. ք.Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետով և 22-րդ կետով ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Էջմիածին համայնքի Ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող Վաղարշապատի ԳԿՏ, հասցեում 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասը, գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար:
2. Հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 100% չափով:
3. Հողամասի աճուրդի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի <<Աճուրդային հանձնաժողով>> -ի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ | Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Վարդան | | | | 7. | Մելիքյան Ներսես | | | |
| 2. | Զաքարյան Սերգեյ | | | | 8. | Միրզոյան Արամայիս | | | |
| 3. | Խաչատրյան Թովմաս | | | | 9. | Մկրտչյան Կարեն | | | |
| 4. | Կոնդյան Դավիթ | | | | 10. | Մովսիսյան Կարեն | | | |
| 5. | Հայրապետյան Վարուժան | | | | 11. | Մուրադյան Սուրեն | | | |
| 6. | Ղազարյան Գևորգ | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ